յորս յետ յայտ առնելոյ զնեղութիւնս իւրեանց, զանկա-
տելին զնուիրակաց Էջմիածնի և ասէին՝ վարդապետք ե-
կեալ 'ի սահմանացն Պարսից 'ի պատճառս բաժանելոյ զՄ-
միւռոնն, ժողովեն զմեծ գումարս դրամոց՝ եւ անցեալ
զչափ առաւել քան զվէտս իւրեանց, զօրօք և երիվարօք
զան ի Ջանեն 'ի տունս մեր, պահանջելով զվէտս երիվա-
րաց եւ իւրեանց. անիրաւութեամբ յափշտակեն զգառս
և զոչխարս, իւղ և մեղր, և զայլ ամենայն ուտելիս եւ
ըմպելիս, որով հասուցանեն մեզ զմեծամեծ չարիս եւ
զրկանս։ Իսկ Եղիազար Կաթուղիկոսն Երուսաղէմի ձրի
բաժանէ մեզ զՄիւռոնն, չպահանջելով 'ի մէնջ և ոչ դանկ
մի, և ինքն հատուցանէ 'ի դանձն Արքունի իւրաքանչիւր
ամի 15,000 փողս. զայս ամենայն գլխաւորք մեր օրինօք
հաստատեալ՝ եւտուն մուրհակս, և ըստ այնմ տուաւ հրո-
վարտակ կաթուղիկոսական, որով արար մեզ Արքայն ըզ-
մեծամեծ շնորհս. եւ խնդրեն արդելուլ զնուիրակսն Էջ-
միածնի չգալ երբէք 'ի սահմանս իւրեանց։ Գրեցաւ հրո-
վարտակ ըստ խնդրանաց նոցա առ ամենայն Իշխանս եւ
Դատաւորս քաղաքաց քաղաքաց բառնալ զանկարգու-
թիւնս նոցա։

Տեսեալ Եղիազարու, թէ Յակոբ Կաթուղիկոս հակա-
ռակ իշխանութեան իւրոյ, առաքէ եւ սրոէ 'ի բազում
գաւառս Հայոց զնամականիս և զկոնդակս իւր, և յորդո-
րէ զնոսա 'ի բաց կալ յիշխանութենէ Եղիազարու, և ճա-
նաչել ինքեանց զլուս՝ զհարազատ աթոռն Էջմիածնի.
զայրացեալ ինքնին մատոյց գիր աղաչանաց առ Եսար-
քոսն, և ամբաստան լեալ զնմանէ, ասէ. ըստ տրամադը-
րութեան Կայսերական հրովարտակին լեալ եմ Պատրիարք
և Կաթուղիկոս յԵրուսաղէմ, սակս ձրի բաժանելոյ զՄիւ-
ռոնն ամենայն Հայոց եղելոց 'ի սահմանս Օսմանեան Պե-
տութեան, և վասն այսր տուեալ է իմ մուրհակս Հայոց
բնակելոց 'ի Կոստանդինուպօլիս, և ըստ այնմ շնորհեալ է
ինձ յԱրքունուստ Կայսերական հրովարտակ։ Իսկ Յակոբ
Կաթուղիկոսն Էջմիածնի, որ նստի 'ի սահմանս Պարսից,
ընդդէմ դարձեալ ինձ և արանց իմոց. թէ դուք հակա-
ռակ օրինաց և կանոնաց առեալ էք հրովարտակ՝ և բրա-
նարարէք զիրաւունս մեր։ Այսպիսի ստութեամբ ամբաս-